ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

փետրվարի 2021 թվականի №Ա
ք.Երևան

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի ապրիլի 17-ի №100Ա որոշմամբ «Թուֆենկյան Հոսփիթալիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Հերիթեյջ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0639 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2020 թվականի հունվարի 18-ը Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը, ինչը, սակայն, չի կատարվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի հոկտեմբերի 18-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի հոկտեմբերի 16-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման նախագծային փաստաթղթեր և հայտնել, որ պետական համալիր փորձաքննության անցկացման անհրաժեշտության առնչությամբ պարզաբանում ստանալու նպատակով դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե,

գ) համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2019 թվականի ապրիլի 29-ին Ընկերությանը տրված №ՏՊ-541-110/0223 բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանների՝ Կայանը ներանցումով է միանալու «Արեգունի» 110կՎ լարման օդային գծի թիվ 110 միջանկյալ հենարանին,

դ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի և 5-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ 110 կՎ և ավելի լարման էլեկտրահաղորդման գծերի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատման, իսկ նշված դեպքում, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596Ն որոշման №4 հավելվածի №3 ցանկի 4-րդ կետի 3-րդ ենթակետի և նույն որոշման №2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի, պահանջվում է պետական համալիր փորձաքննության իրականացում,

ե) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի №1/32.12/13217-2020 գրությամբ Հանձնաժողով ներկայացված դիրքորոշման համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված՝ «էլեկտրահաղորդման գծեր՝ 110 կՎ և ավելի լարման» գործունեության տեսակը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատման՝ անկախ էլեկտրահաղորդման գծի միացման ձևից և երկարությունից,

զ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

է) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

ը) Ընկերությունը չի ներկայացրել՝ Կայանը բաշխման ցանցին 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի միջոցով միանալու պարագայում պահանջվող պետական համալիր փորձաքննություն անցած նախագիծը, որից ելնելով Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի թվականի դեկտեմբերի 24-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի ժամկետը 10 օրով երկարաձգվել է,

թ) Ընկերությունը 2020 թվականի դեկտեմբերի 29-ի և 2021 թվականի հունվարի 21-ի գրություններով ներկայացրել է պարզաբանումներ, ըստ որոնց՝ վերջինս առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված նախագծման թույլտվությամբ (ճարտարապետահատակագծային առաջադրանքով), որի համաձայն Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության: Հետագայում ստացել է նաև շինարարության թույլտվություն: Ներկայացվել են նաև Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պարզաբանումներն առ այն, որ Կայանի կառուցումն առանց էլեկտրահաղորդման գծի կառուցման՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փարձաքննության, իսկ պետական համալիր փորձաքննության ենթակա են էներգետիկայի և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների այն քաղաքաշինական օբյեկտները, որոնք ընդգրկված են նշված օրենքով սահմանված ցանկում,

ժ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0639 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 18-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը: Մասնավորապես, Հանձնաժողով չի ներկայացվել՝ Կայանը բաշխման ցանցին 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի միջոցով միանալու պարագայում գործող օրենսդրությամբ պահանջվող համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը: Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ վերջինս առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքից ստացված նախագծման թույլտվությամբ (ճարտարապետահատակագծային առաջադրանքով), առ այն, որ Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության, ապա՝ համապատասխան փորձաքննության ենթակա լինելու հարցը կարգավորվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշմամբ, ըստ որոնց տվյալ դեպքում պահանջվում է պետական համալիր փորձաքննության իրականացում: Նշված հանգամանքը հաստատվել է նաև իրավասու մարմնի՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից սույն որոշման «ե» պարբերությունում ներկայացված դիրքորոշմամբ, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ ԼԷ №0639 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 18-ը, Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած, դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի մարտի 20-ի №01-298 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն

երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12,500,000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի սեպտեմբերի 14-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0639 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված՝ մինչև 2021 թվականի հուլիսի 18-ը.

2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0639 լիցենզիայի գործողությունը կկասեցվի.

3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
փետրվարի 2021թ.